Պարոն Հ. Կարապետյանին
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գլխավոր քարտուղար պարոն Ա. Սաֆարյանին

Տիկին Ն. Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Ա. Սաֆարյան _____

«10» 11 2025թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը՝**
   - Անուշիկ Աղինյան,

2. **Զբաղեցրած պաշտոնը** –

– ՀՀ ՀԾԿՀ իրավաբանական և լիցենզավորման վարչության իրավաբանական և դատական սպասարկման բաժնի պետ,

3. **Գործուղման վայրը և ժամկետները** – Բուդապեշտ (Հունգարիա), 2025 թվականի նոյեմբերի 2-5-ը ներառյալ

4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում)** – Էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիա (ERRA):

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)** – Մասնակցություն էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիայի սպառողների պաշտպանության կոմիտեի հերթական հանդիպմանը.

6. **Քննարկված թեմաները (հարցերը)**

Սպառողների պաշտպանության կոմիտեի հերթական հանդիպման առաջին օրը՝

- իրականացվեց քննարկում աշխատանքային խմբի կողմից նախապատրաստվող՝ մատակարարման պայմանագրերի և էլեկտրաէներգիայի հաշվառման վերաբերյալ հաշվետվության կազմման կազմակերպական հարցերի վերաբերյալ,

-անդամ երկրների մասնակիցների կողմից ներկայացվեցին էներգետիկ ոլորտին վերաբերող վերջին նորությունները՝ կապված սպառողների իրավունքների պաշտպանության հետ,

-ներկայացվեցին դեռևս նախորդ հանդիպման ընթացքում մեկնարկած՝ ազգային կարգավորողների ներքին կառուցվածքի վերաբերյալ ելույթները,

Հանդիպման երկրորդ օրը՝

- Մասնակիցների կողմից ներկայացվեցին իրենց երկրներում գործող կարգավորումները՝ էլեկտրամատակարարման պայմանագրերի, մատակարարների և սպառողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ,

-Մասնակիցների կողմից ներկայացվեցին էլեկտրաէներգիայի հաշվառման և դրա շրջանակներում ներկայացվող դիմում-բողոքների քննարկման գործընթացում ազգային կարգավորող մարմինների դերերը:

-Քննարկվեցին և ընտրվեցին հաջորդ հանդիպման քննարկումների թեմաները:

7. Հանդիպումները, ելույթները. – Նոյեմբերի 3-ին իմ կողմից ներկայացվել են Հայաստանի Հանրապետությունում էներգետիկայի ոլորտին վերաբերող վերջին նորությունները՝ կապված սպառողների իրավունքների պաշտպանության հետ, այդ թվում՝ ներդրված նոր կարգավորումները, էլեկտրաէներգետիկական շուկայի զարգացմանն առնչվող տեղեկություններ, քննարկման փուլում գտնվող նախագծերը:

Նոյեմբերի 4-ին իմ կողմից ներկայացվել է էլեկտրաէներգիայի հաշվառման և դրա շրջանակներում ներկայացվող դիմում-բողոքների քննարկման գործընթացում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի դերը գործող իրավակարգավորումների շրջանակում:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման ընթացքում քննարկվեցին և ընտրվեցին հաջորդ հանդիպման ընթացքում քննարկվելիք թեմաները: Պայմանավորվածություն ձեռք բերվեց հաջորդ հանդիպման ժամանակի և ֆորմատի մասին:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները -

Առաջարկվում է վերանայել Հանձնաժողովի կողմից իրականացվող դիմում-բողոքների քննարկման գործընթացը՝ ներդնելով տարբեր երկրներում գործող մի շարք կարգավորումներ և մեխանիզմներ, օրինակ՝ ներդնելով էներգետիկայի բնագավառում սպառողների իրավունքների պաշտպանի ինստիտուտը (Energy Ombudsman), քննարկել

դիմում-բողոքների ներկայացման և դրա քննարկման գործընթացի իրականացման ավտոմատացված համակարգի ներդրման հնարավորության հարցը՝ նպատակ ունենալով նվազեցնել աշխատակիցների կողմից տեխնիկական մի շարք աշխատանքների իրականացման անհրաժեշտությունը:

Գործուղվող ---------- 10.11.25թ. ---------- ***Ա. Աղինյան***

(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը __Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով__

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հրաման 745-ԳՔ, 19.08.2025թ**

3. ՀՀ ՀԾԿՀ իրավաբանական և լիցենզավորման վարչության իրավաբանական

և դատական սպասարկման բաժնի պետ՝ **Անուշիկ Աղինյան**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը **ք.Բուդապեշտ /Հունգարիա/**

5. Գործուղման ժամկետները **02.11.2025-05.11.2025 թթ**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն**)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Անուշիկ Աղինյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապարհածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս)	10,833	10.833
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	216,666	216.666
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝դոլար)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)		
	Օրերի քանակը	3	
	Ընդամենը (դրամ)	118,584	118.584
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով դոլար)	84	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	32,153	
	Օրերի քանակը	4	
	Ընդամենը (դրամ)	128,611	128.611
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար	16,700	16.700
	Այլ ծախսեր		-
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		491.394	491.394

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ

11.11.2025թ.